Բնապահպանության ոլորտում հիմնական ռազմավարական փաստաթուղթ է ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների Ազգային ծրագիրը, որը մշակվում է հինգ տարի ժամկետով՝ իր մեջ ներառելով մանրամասն գործողություններ բոլոր ենթաոլորտների՝ բնապահպանության ազգային ռազմավարության, քաղաքականության և օրենսդրական կարգավորման, ինստիտուցիոնալ կառավարման, տնտեսական և ֆինանսական մեխանիզմների, շրջակա միջավայրի կայուն կառավարման, բնապահպանության ոլորտում միջազգային համագործակցության զարգացման, հանրության իրազեկման և բնապահպանական դաստիարակության կրթության և տեղեկատվության մատչելիության ապահովման համար:

Ըստ կառավարության գնահատականի՝ ներկայումս ՀՀ-ում առկա է համարյա ամբողջական բնապահպանական իրավական դաշտ:

Մշակվել են Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրի ազգային ծրագիր, կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր, Անապատացման դեմ պայքարի ազգային գործողությունների, անտառային քաղաքականություն և ռազմավարություն, անտառի ազգային ծրագրերը, շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարություն և միջոցառումների ծրագիր և այլն (ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության նախարարության պաշտոնական կայք): Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարություն և միջոցառումների ծրագիրը նպատակառոտորեն է շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման, բարելավման համար համապատասխան պայմաններ ստեղծելուն, ինչպես նաև կայուն զարգացման անցումն ապահովելուն՝ ներկա և ապագա սերունդների պահանջմունքների ապահովման համար: «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի համաձայն՝ սույն ռազմավարությունը.

- կկատարելագործվի շրջակա միջավայրի պահպանության նորմատիվա-իրավական դաշտը, այդ թվում՝ կնախատեսվի էկոլոգիապես արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նպատակով տնտեսվարող սուբյեկտների տնտեսական խթանման միջոցները,
- կձևավորվի շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կառավարման արդյունավետ ներառելով միջազգային ստանդարտները, համակարգը,
- կնպաստի խախտված էկոհամակարգերի վերականգնմանը, ինչպես նաև ավելի մատչելի կդարձնի շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվության ապահովումը և միջազգային համագործակցության զարգացումը:

Ռազմավարական բնապահպանական գործողությունների ծրագրերը նախատեսում է բնապահպանական քաղաքականության գործիքների համակարգված փաթեթ, այն առավել համակարգված կդարձնի բնապահպանական և բնօգտագործման ոլորտում առկա և առաջիկա բնագավառային գործողությունների ծրագրերը, կանդրադառնա խնդիրների լուծմանը, ինչպես նաև հաշվի կառնի ՀՀ միջազգային պարտավորությունները՝ բնապահպանության ոլորտում (ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Դրական առաջընթաց է գրանցվել նաև տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ներդրման և դրանց արդյունավետությունը բարձրացնելու բնագավառում, բարձրացրել է բնակչության բնապահպանական իրազեկման աստիճանը: ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ, որոնց շնորհիվ տարբերակվել են քաղաքականության

մշակման և իրականացման գործառնությունները և դրան համար պատասխանատու ստորաբաժիններն ու կազմակերպությունները:

Առաջին ազգային ծրագրով սահմանված մի շարք գործողությունների չիրականացման ու թերացման պատճառ է համարվում անհրաժեշտ ֆինանսավորման և այդ փաստաթղթի թարմացման պարբերականության բացակայությունը:

Եզրակացություն

Այսպիսով՝ շրջակա միջավայրի պահպանության զարգացման հեռանկարների համալիրում կարելի է առանձնացել հետևյալ առաջնահերթությունները.

- բնապահպանական կրթության շարունակականության ապահովում և շարունակական զարգացում, բնակչության իրազեկվածության մակարդակի ավելացում,
- կայուն զարգացման ազգային հայեցակարգում շրջակա միջավայրի պահպանման ռազմավարության գերակա նպատակից բխող ենթադրադրային ռազմավարությունների (անտառների և կենսաբազմազանության պահպանման ռազմավարություն, բնական ռեսուրսների կառավարման ռազմավարություն, հանքարդյունաբերության կառավարման ռազմավարություն, շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման ռազմավարություն և այլն) մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցությունների պատշաճ գնահատում,
- մարդկային գործունեության՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործության փոխհատուցման քաղաքականությունից կանխարգելման քաղաքականության անցում, շրջակա միջավայրի պահպանության զարգացման սկզբունքների համապատասխանեցում կայուն զարգացման սկզբունքներին, մասնավորապես՝ ներկա և ապագա սերունդների բնապահպանական և սոցիալ-տնտեսական պահանջմունքները բավարարող զարգացման ապահովում:

Գրականություն

- ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության նախարարության պաշտոնական կայք, <http://www.mnp.am/am/pages/140>
- «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին քաղվածք», ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, 24 օգոստոսի 2017 թվականի N 36, էջ 10:
- Մովսիսյան Վ.** 2016. Ռազմավարական էկոլոգատնտեսական համակարգի ներդրման նպատակահարմարությունը ՀՀ-ում, Ֆինանսներ և էկոնոմիկա, N7-8(191-192), էջ 128-130:
- Շահագիզյան Ս.** 2003. Բնության անկենդան հուշարձանների և նրանց պահպանության խնդիրները, «Գիտելիք» N 8, Երևան, էջ 27-32:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք,
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>
«Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման
կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, [https://www.e-](https://www.e-draft.am/projects/549)
[draft.am/projects/549](https://www.e-draft.am/projects/549)

О НЕКОТОРЫХ ПЕРСПЕКТИВАХ РАЗВИТИЯ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Погосян Д.К.

Резюме

В статье рассматриваются перспективы развития окружающей среды с целью реализации концепции устойчивого развития на местах и совершенствования стратегической экологической оценки. Подчеркивается важность улучшения стратегической оценки эффективности ряда природоохранных функций. Системы СЭЭО (стратегическая эколого-экономическая оценка) и СЭО (стратегическая экологическая оценка) также представлены в качестве приоритета для развития охраны окружающей среды в Республике Армения, как эффективный инструмент для улучшения оценки устойчивого развития и включения значительного воздействия на окружающую среду в стратегические документы.

ABOUT SOME PROSPECTS OF DEVELOPING ENVIRONMENTAL PROTECTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Poghosyan D.K.

Abstract

In article, the perspectives of environmental development are examined with a view to the implementation of the concept of sustainable development in the field and the improvement of strategic environmental assessment. The importance of improving strategic assessment for the effectiveness of a number of environmental protection functions is emphasized. SEEA (strategic ecological-economic assessment) and SEA systems are also presented as a priority for the development of environmental protection in the Republic of Armenia, as an effective tool for improving assessment and sustainable development and incorporating significant environmental impacts into strategic documents.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

**ԳԵՂԱՄԱ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՄԻ ԼԵՌՆԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԵՐԿՐԱԲԱՆԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՋՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ
ՍՈՐՇՈՄԵՏՐԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

Դեմիրճյան Ս.Ս., Սարգսյան Ռ.Ս.

*Երևանի պետական համալսարան
ՀՀ ք. Երևան, 0025, ԱլեքՄանուկյան 1
E-mail sam.demirtshyan@gmail.com*

*ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
ՀՀ ք. Գյումրի, 3115, Վազգեն Սարգսյան 5
Հանձնված է խմբագրություն 03.02.2020թ.*

Աշխատանքում դիտարկված են Սևանա լճին հարակից Գեղամա և Վարդենիսի լեռնազանգվածների երկրաբանատեկտոնական և ջրաերկրաբանական կառուցվածքների ուսումնասիրությունների արդյունքները մորֆոմետրիական իզոլոնգերի մեթոդի կիրառմամբ: Արդյունքները համեմատվել են երկրատեկտոնական և հնառելիեֆի տվյալների հետ:

Պարզված է, որ քարտեզագրված անոմալիաները պայմանավորված են տարածքների տեկտոնական կառուցվածքներով:

Անոմալիաները Գեղամա լեռնազանգվածում համընկնում են հայտնի, իսկ Վարդենիսում՝ կանխատեսվող խախտման գոտիների հետ:

Հանգուցային բառեր. մորֆոմետրիա, իզոլոնգեր, գետահովիտներ, անտիկլինալներ, խախտումներ, հնահուններ, ջրհավաք ավազան:

Սևանա լճի ջրհավաք ավազանների ուսումնասիրությունները կարևոր են վերջինիս պահպանման և ջրային ռեսուրսների կառավարման համար: Հոդվածում մասնավորապես դիտարկված են լճի արևմտյան և հարավային ջրհավաք ավազանների երկրաբանա-տեկտոնական և ջրաերկրաբանական, մասնավորապես հնառելիեֆի առաջացման պայմանները: Որպես ուսումնասիրությունների մեթոդ կիրառված է մորֆոմետրիական մեթոդի իզոլոնգերի տարբերակը:

Տվյալ մեթոդի հիմքում դրված են պատկերացումներ, որ էկզոգեն ռելիեֆաձևավորող պրոցեսները կախվածություն ունեն տարածքների ծանրության ուժի պոտենցիալի տարբերությունից, պայմանավորված հիմնականում դրանց երկրաբանական կառուցվածքով և երկրակեղևի շարժումներով: Ապացուցված է, որ տեղանքի բարձրությունը կապված է ծանրության ուժի հետ՝ բարձր ռելիեֆառաջացումների դեպքում այն տվյալ շրջանում փոքրանում է, իսկ իջեցումների դեպքում՝ աճում:


Հայտնի է, որ գետահովիտները հաճախ կից են տեկտոնապես խախտված գոտիներին, մասնավորապես խզվածքներին, վարնետքներին, տեկտոնական ճեղքավորված գոտիներին և իջվածքներին: Ծանրության ուժի ամենամեծ գրադիենտները դիտարկվում են երկրակեղևի խոշոր գետահովիտներին կից տեկտոնական տեղամասերում:

Աշխատանքում ուսումնասիրված են Գեղամա լեռնազանգվածի արևելյան և Վարդենիսի՝ հյուսիսային 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի իզոլոնգերի քարտեզները և դիտարկված է դրանց համեմատական կապը տարածքների երկրատեկտոնական կառույցների և հնառելիքի հետ:


Կիրառված մորֆոմետրական իզոլոնգերի մեթոդի հիմքում ընկած է Ռ. Հորտոնի կողմից առաջարկված գետահոսքերի դասակարգումը (Хортон, 1948): Ըստ որի 1-ին կարգի գետահոսքեր են համարվում այն գետերը կամ գետակները, որոնք սկիզբ են առնում անմիջականորեն ջրբաժանից կամ որոնց մեջ այլ գետեր չեն թափվում: Երկու նման հոսքերի միացումից սկսվում է 2-րդ կարգի հոսքը, իսկ երկու 2-րդ կարգի հոսքերի միախառնումից՝ 3-րդ կարգի գետահոսքը և այլն: Երբ բարձր կարգի գետահոսքին միանում է ցածր կարգի գետահոսք, դրանից կարգը չի փոխվում: Մեթոդի կիրառման արդյունքում կատարված է տեղանքի հորիզոնական մասնատվածության հաշվարկ՝ տարբեր կարգի գետահովիտների երկարությունների հիման վրա, ստացված արժեքները վերագրված են տվյալ կարգի գետահովտի թափվեցի կենտրոնին (Фило-софов, 1960): Քանակական արժեքների ինտերպոլիացիայի արդյունքում կազմված իզոլոնգերի քարտեզը, մասնավորապես արտահայտում է տարածքի երկրակեղևի վերին շերտերի կառուցվածքը:

Օգտագործված է այն սկզբունքը, որ բարձր արժեքներով արտահայտված իզոլոնգերի անոմալիաները բնորոշում են իջեցումներ, իսկ ցածր արժեքներով արտահայտված անոմալիաները՝ դրական կառուցվածքներ (Еликан, 2006; Хубаева, 2003):


Ստորև բերված են վերը նշված Գեղամա և Վարդենիսի լեռնազանգվածների համար ստացված իզոլոնգերի 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի քարտեզները:



Նկ.1. Սղաղա լճի ջրհավաք ավազանների 1-ին կարգի իզոլոնգերի քարտեզ, 2020թ.:



Նկ.2. Սևանա լճի ջրհավաք ավազանների 2-րդ կարգի իզոլոնգերի քարտեզ, 2020թ.:



Նկ.3. Սևանա լճի ջրհավաք ավազանների 3-րդ կարգի իզոլոնգերի քարտեզ, 2020թ.:

Քարտեզների կազմման համար օգտագործվել է 1:100000 մասշտաբի տոպոգրաֆիական հենք, համապատասխան գետահոսքի երկարության արժեքը վերագրվել է վերջինիս թափվեզի կենտրոնին և կատարվել է ինտերպոլացիա Կրեկինգ եղանակով: Բոլոր քարտեզներում սպիտակից դեպի սև գույնը իզոլոնգերի դաշտի արժեքը մեծանում է (տես նկ.1, 2 և 3):

Դիտարկելով իզոլոնգերի հարաբերական տեղադիրքերը, կարելի է նկատել, որ դրանք փոքր ինչ տարբերություններով գտնվում են նույն տարածքում, որը հավանաբար կապված է տարածքի ապարների հրաբխային կառուցվածքի հետ (Балаян, 1969), որոնք էրոզիայի նկատմամբ բավական կայուն են: Բացի այդ, այս հանգամանքը ցույց է տալիս տարածքում շարժումների բնույթի պահպանումը:

Գեղամա լեռնազանգվածի վրա բարձր արժեքներով անոմալիաների մաքսիմումների ուղղությունը (քարտեզներում սպիտակ ընդհատ

զծեր) համապատասխանում են տվյալ տեղամասում նախկինում առանձնացված երկրաբանական խզվածքին (Avagyan and etc., 2018; Ritz and etc., 2016):

Վարդենիսի լեռնազանգվածում իզոլոնգերի անոմալիաներն առանձնանում են բարձր արժեքներով, որոնց մաքսիմումներով տարված զիծը ուղղված է հյուսիս-արևելք հարավ-արևմուտք ուղղությամբ: Վերջինս ցույց է տալիս, որ այն հավանաբար կապված է տվյալ ուղղությամբ առկա խախտման գոտու հետ:

Հարկ է նշել նաև, որ բոլոր քարտեզագրված անոմալիաները տեղադրված են նշված երկու լեռնազանգվածների ջրբաժաններից դեպի Սևանա լիճ:

Հատկանշական է, որ իզոլոնգերի անոմալիաների մաքսիմումներով տարված ուղղությունները, ինչպես նաև դրանց ձևը չեն համապատասխանում լավատակ ռելիեֆի հնահունների ուղղությունների հետ, որից կարելի է եզրակացնել, որ հնահունները կապված չեն տեկտոնական կառույցների հետ, ուստի դրանք ձևավորվել են էրոզիոն պրոցեսների արդյունքում (Минасян и Варданян, 2003):

Եզրակացություն

Իրականացված ուսումնասիրությունների վերլուծություններից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

- Գեղամա լեռնազանգվածի իզոլոնգերի բարձր արժեքների անոմալիաները կապված են այդտեղ հայտնի խախտման գոտիների հետ:
- Վարդենիսի լեռնազանգվածի վրա անոմալիաները ենթադրաբար կապված են այդ տեղամասում համապատասխան ուղղությամբ ձգված խախտման գոտու հետ:
- Տարածքի լավատակ ռելիեֆի հնահունները ձևավորվել են էրոզիոն պրոցեսների արդյունքում:

Գրականություն

- Балян С.П. 1969. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Ереван, Издательство Ереванского Университета, 375с.
- Еликан О.Д. 2006. Использование метода изолонг для изучения морфоструктуры и новейших движений на радыгинской площади (камчатка). Вестник краунц. серия науки о земле. №1. Выпуск №7, с.165-168.
- Минасян Р.С. и Варданян В.П. 2003. Палеорельеф и распределение подземного стока центрального вулканического нагорья Армении. Ереван, Асогик, 151с.
- Философов В.П. 1960. Краткое руководство по морфометрическому методу поисков тектонических структур. Издательство Саратовского университета, 70с.
- Хортон Р.Е. 1948. Эрозионное развитие рек и водосборных бассейнов. Гидрофизический подход к количественной морфологии. М., И.Л., 158с.
- Хубасева О.Р. 2003. Морфоструктурный анализ района долины реки паратунки по данным морфометрических методов. Вестник краунц. серия науки о земле. №1, с.141-146.

- Avagyan A., Sosson M., Sahakyan L., Sheremet Y., Vardanyan S., Martirosyan M., and Muller C. 2018. Tectonic evolution of the northern margin of the cenozoic ararat basin, lesser caucasus, Armenia. Journal of Petroleum Geology, Vol.41 (4), October, p.495-512.
- Ritz J.-F., Avagyan A., Mkrtchyan M., Nazari H., Blard P.-H., Karakhanian A., Philip H., Balescu S., Mahan S., Hout S., Münch P., Lamothe M. 2016. Active tectonics within the NW and SE extensions of the Pambak-Sevan-Syunik fault: Implications for the present geodynamics of Armenia. Quaternary international 395, p.61-78.

ИССЛЕДОВАНИЕ ГЕОЛОГОТЕКТОНИЧЕСКОГО И ГИДРОГЕОЛОГИЧЕСКОГО СТРОЕНИЯ ГЕГАМСКОГО И ВАРДЕНИССКОГО ХРЕБТОВ С ПРИМЕНЕНИЕМ МОРФОЛОГИЧЕСКОГО МЕТОДА

Демирчян С.М., Саргсян Р.С.

Резюме

В работе приведены результаты исследования геологотектонического и гидрогеологического строения примыкающих к озеру Севан Гегамского и Вардениского горных массивов с использованием морфометрического метода изолонг. Эти результаты сопоставлены с палеорельефом и геотектоническими данными.

Сопоставление полученных результатов с данными палеорельефа и геотектоники позволяет утверждать, что картированные аномалии изолонг обусловлены тектоникой этих массивов.

Аномалии Гегамского горного массива совпадают с известными, а Вардениского - с прогнозируемыми зонами нарушений.

INVESTIGATION OF GEOLOGICAL-TECTONIC AND HYDROGEOLOGICAL STRUCTURES OF GEGHAMA AND VARDENIS MASSIFS WITH THE USAGE OF MORPHOMETRIC METHOD

Demirtshyan S.M., Sargsyan R.S.

Abstract

The article reviews the investigation results of geological, tectonic and hydrogeological structures of Geghama and Vardenis massifs in the nearby territory of Lake Sevan using morphometric method of isolongs. The results have been compared to the paleorelief and geotectonic data.

It is found out that mapped anomalies are associated with tectonic structures of area.

Anomalies in Geghama massif match with known zones of faults and. In Vardenis massif they match with the predicted zones of faults.

**ԼԵՌՆԱՅԻՆ ԲՆԱՏԵԽՆԱԾԻՆ ԼԱՆՂԱՖՏՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Կարապետյան Գ.Մ., Կարապետյան Դ.Գ., Բարսեղյան Գ.Ս.

*Հայկական պետական մանկավարժական համալսարան,
Երևան, Տիգրան Մեծ 17
E-mail: kartimat.74@mail.ru
Հանձնված է խմբագրություն 21.02.2019թ.*

Չնայած լեռնային բնատեխնածին լանդշաֆտների ձևավորման և աշխարհագրական զարգացման օրինաչափությունների հետազոտությունները ներկայումս իրականացվում են համեմատաբար մեծ ծավալներով ու խոշոր մասշտաբներով, այնուհանդերձ դրանց առավել կարևոր բաղադրամասերի առանձնահատկությունները և զարգացման ժամանակակից արտահայտման ձևերի ու գրավչության գնահատման սկզբունքների հետազոտությունները, այսօրվա դրությամբ դեռևս կարելի է համարել ոչ լիարժեք, իսկ առանձին դեպքերում նաև գիտականորեն քիչ հավաստի կամ գրեթե չհիմնավորված:

Հանգուցային բառեր. բնատեխնածին համակարգ, գեղագիտական ընկալում, սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատում, գեղագիտական լանդշաֆտագիտություն:

Հայտնի է, որ լեռնային բնատեխնածին համակարգերի առանձին բաղադրամասերի բնական գեղեցկությունը և դրանց գրավչական առանձնահատկությունները պայմանավորող ռեսուրսները համարվում են «Կարևոր և թանկարժեք բարիք» Երկրի ամբողջ բնակչության համար: Դա բնակչության կողմից ընդունվում է անկախ նրանց ազգային պատկանելիությունից, դավանանքից, տեղաբաշխումից և այլ հանգամանքներից: Հայտնի է նաև այն, որ հատկապես լեռնային բնատեխնածին լանդշաֆտի առանձին բաղադրամասեր առավել զգայուն են և շուտ փոփոխվող արտածին և ներծին ուժերի ներգործության հետևանքով: Դրանք, առաջին հերթին, կապված են այնտեղ մուտք գործող արեգակնային էներգիայի ձևի ու քանակի հետ, ինչով և պայմանավորված է օգտագործվող այդ էներգիայի շրջապտույտն ու լանդշաֆտային տարրերի կառուցվածքային փոփոխությունները (Կարապետյան Դ.Գ., 2017):

Այդ թեմատիկայով հրատարակված նյութերի համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ վերջին տասնամյակներում նկատվում է լեռնային լանդշաֆտների ուսումնասիրությունների նոր ուղղու-

թյուն, որն աշխարհագրական ժամանակակից գրականության մեջ անվանակոչվել է որպես «**Գեղագիտական լանդշաֆտագիտություն**» (Ավանեսյան Ա., Մալխասյան Է., Նազարեթյան Ս., 2010):

Լեռնային բնատեխնածին լանդշաֆտների և միջլանդշաֆտային կապերի հետազոտությունները, դրանց առանձնահատկությունների գիտականորեն հիմնավորված ընկալումները հնարավորություն են տալիս բացահայտել և օբյեկտիվորեն գնահատել բնական ու մարդածին առանձին, առավել կարևոր գործոնների ազդեցության ներքո դրանց զարգացման ժամանակակից միտումները, ինչը, մեր կարծիքով, ունի առանձնակի նշանակություն հատկապես տվյալ համակարգում բնակչության տնտեսական գործունեության ամբողջ ոլորտի և զբաղվածության պլանավորման և իրագործման համար: Անշուշտ, այդ համատեքստում կարևոր է նաև տարբեր լանդշաֆտային գոտիներում բնակչության ռեկրեացիոն և բուժման, զբոսաշրջության տարբեր ձևերի առանց ռիսկերի կազմակերպումը: Այստեղից հետևում է, որ լանդշաֆտային հետազոտությունների համատեքստում գեղագիտական լանդշաֆտագիտության պրագմատիկ նշանակությունը պետք է արտահայտվի այդ համակարգերի գեղագիտական առանձնահատկությունների հատկապես դրանց զբաղյալության նախադրյալների բացահայտման, բնության գեղեցկության նկատմամբ մարդկանց նախապատվությունների, ինչպես նաև այդ գեղեցկության ընկալման առանձնահատկությունների ընդհանրացումների տեսքով (Խոյեցյան Ա., Խաչատրյան Ս., 2016):

Ինչպես ցույց տվեցին այս նպատակներով կատարված մեր հետազոտությունները, ըստ էության, դրանք պետք է համարվեն **կոնստրուկտիվ** (կառուցողական) **աշխարհագրության** ժամանակակից պրագմատիկ ուղղություններից մեկը (Սուվարյան Ս.Ռ., 2018): Իսկ դա նշանակում է, որ գեղագիտական լանդշաֆտագիտության հետազոտությունների վեկտորը հիմնականում պետք է ուղղել լեռնային բնամարդածին լանդշաֆտներում արդեն ձևավորված բնապատկերների և զբաղյալական օբյեկտների բացահայտման և գնահատման հիմնախնդիրների վրա: Ուստի հետազոտությունների այդ փուլում հատկապես կարևոր է գեղագիտական հիմքի վրա որոշել թե գոյություն ունեն արդյո՞ք լանդշաֆտային բաղադրամասերի միջոցով ձևավորված գեղագիտական մշտական գրավչական արժեքներ, թե՞ դրանք կախված են տարբեր գեղագիտական հակումներ ունեցող մարդկանց լանդշաֆտների այդ արժեքների սուբյեկտիվ գնահատումից ու ընկալումից:

Լեռնային բնատեխնածին լանդշաֆտների տարածական ընկալման երևույթի տարբերությունների ուսումնասիրությունների ժամանակ անհրաժեշտ է նաև մի կողմից բացահայտել լանդշաֆտների զբաղյալության առավելագույն և նվազագույն ազդեցությունների տարբերությունները մարդկանց վրա, մյուս կողմից բացահայտել նրանց կողմից լանդշաֆտների տարածական ընկալման տարբերությունների հիմնական պատճառները: Պարզվում է, որ ներկայումս այս համա-

տեքստում արդեն գրեթե ձևավորվել են լանդշաֆտների տարածական ընկալման և գեղագիտական գնահատման երկու ուղղությունները՝

Օբյեկտիվ, Սուբյեկտիվ՝

Օբյեկտիվ ուղղությունը՝ ինչպես ընդունում են այդ ուղղության համախոհները, ենթադրում է լանդշաֆտների կառուցվածքային բնութագրման գեղագիտական գրավչության ցուցանիշների բացահայտման հետազոտությունները, իսկ **սուբյեկտիվը**՝ բնակչության առանձին խմբերի լանդշաֆտա-գեղագիտական սուբյեկտիվ նախասիրությունների հետազոտությունները և դրանց գիտական ընդհանրացումները (Մարտիրոսյան Լ.Մ., Աբրահամյան Վ.Ս., 2018):

Առաջին դեպքում նպատակահարմար է գեղագիտական գրավչության համար հիմք ընդունել տվյալ տարածքում անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը, որոնց հնարավոր է բացահայտել լանդշաֆտային տարբեր բնական բաղադրամասերի վերլուծության արդյունքներով: Լանդշաֆտների կարևոր բաղադրամասերի համապարփակ վերլուծություններից հետո ցանկալի է դրանք հնարավորինս գնահատել համապատասխան քանակական ցուցանիշների համակարգով: Անշուշտ, հիմնավորելով այդ ցուցանիշների հավաստիությունը, որոնք հետագա լրամշակման ընթացքում պետք հիմք հանդիսանան յուրաքանչյուր տարածքի գրավչական ինտեգրալ գնահատման համար: Ակներև է, որ յուրաքանչյուր բաղադրիչ տվյալ դեպքում բնութագրվելու է որոշակի որակական ու քանակական ցուցանիշներով:

Կատարված հետագա հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ լեռնային տարածքներում դիտվող բնապատկերներն անհամեմատ բազմազան են: Դրանք շատ տարաբնույթ են թե՛ առանձին պատկերային, և թե՛ պատկերային օբյեկտների միասնականությամբ: Հետևաբար դրանց **պրագմատիկ նշանակությունը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բաղադրիչի համար մշակել իրեն առանձնահատուկ ցուցանիշ, այն էլ ոչ թե ընդհանուր օգտագործողների կողմից օգտագործման համար, այլ տվյալ բաղադրիչի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող անհատների համար:** Եթե գնահատման սկզբունքները գիտականորեն հիմնավորված են, ապա ստացված ցուցանիշների միջոցով կարելի է դրանք խմբավորել որոշակի խմբերի մեջ՝ մատնանշելով նաև դրանց օգտագործման ոլորտները և անմիջական օգտագործողները: Առանձնացված այդ խմբերը կարող են լինել նույնպես բազմաթիվ, որոնց քանակը կախված կարող է լինել յուրաքանչյուր լանդշաֆտային միավորի մեջ գտնվող օբյեկտների քանակից, դրանց որակական հատկանիշներից, ընկալման հնարավորություններից և այլն: Այսպես, օրինակ, մի խմբում կարող են խմբավորվել բնապատկերների մեջ մտնող կարևոր օբյեկտները, որոնք ունեն տարբեր չափեր, օրինակ լճերը և ջրավազանները, հետաքրքիր ձևեր ունեցող և արագ աճող ձորակները և այլն: Մյուսը, որպես կանոն ունեն որոշակի քանակական ցուցանիշներ և ենթակա են հաշվարկումների: Մի խմբի մեջ, օրինակ, կարելի է առանձնացնել այն տարրերը, որոնք

բնութագրելու են առկա բնապատկերների հիմնական առանձնահատկությունները, օրինակ հեռանկարի խորությունը, դրա բազմապլանությունը, զոնայականությունը, գոտիականությունը, սեզոնային բնույթն և այլ հիմնական ասպեկտներ: Կարևոր է առանձնացնել նաև օբյեկտներ, որոնք բնապատկերների մեջ գեղագիտական գրավչության համար կարող են ունենալ **ինչպես դրական, այնպես էլ բացասական տպավորություններ**: Միայն նման ձևով խմբավորումներից ու ստացված արդյունքի ընդհանրացումներից հետո հնարավոր կլինի տալ տվյալ լանդշաֆտի գեղագիտական գրավչության օբյեկտիվ գնահատականը:

Մի խումբ հետազոտողների կողմից լեռնային լանդշաֆտների գեղագիտական գնահատման եղանակ է ընդունվում նաև դրանց գնահատման **սուբյեկտիվ** եղանակը: Այս մեթոդի դեպքում բնապատկերները գնահատվում են որպես մեկ **ամբողջականություն**, որպես նրա բոլոր բաղադրամասերի սինթեզման միջոցով ստացված մեկ **կատեգորիա**: Սակայն այդ սինթեզման պրոցեսը պետք է կատարվի մարդկանց, այսինքն այդ սինթեզին մասնակցող անհատների սուբյեկտիվ կարծիքների համապատասխան վերլուծությունից ու գնահատումից հետո:

Սուբյեկտիվ գնահատման ժամանակ գնահատման ենթակա տարածքներում անհրաժեշտ է իրականացնել նպատակային լուսանկարահանումներ (ցանկալի է գունավոր), այսինքն ստեղծել տվյալ տարածքին բնորոշ բնապատկերների պատճենները: Այնուհետև այդ պատկերները պետք է դիտարկվեն և գնահատվեն գնահատմանը մասնակցող բոլոր անձանց կողմից, որոնք կարող են լինել աշխարհագրագետներ, կենսաբաններ, բուսաբաններ, երկրաբաններ, ինչպես նաև այլ մասնագետներ:

Գնահատման սուբյեկտիվ մոտեցումը մի կողմից անառարկելի է, քանի որ վերջնական ցուցանիշները ստացվում են մեծ թվով մարդկանց մտածողության արդյունքում, սակայն այն մեծ տարածքների գնահատման ժամանակ դժվար է իրականացնել և շատ հաճախ օգտագործվող գնահատականները ոչ բոլոր դեպքերում են տալիս լիակատար պատկերացումներ հիմնահարցի ճիշտ գնահատման վերաբերյալ: Նման պարագաներում շատ տարբեր են լինում նաև կարծիք հայտնողները, որոնք որպես կանոն ունենում են **խիստ տարբեր նախասիրություններ և պատկերացումներ գնահատվող երևույթների վերաբերյալ**: Հաշվի առնելով այդ հանգամանքը, մեզ թվում է, որ տարածքի պատկերա-գեղագիտական վերլուծությունների ու գնահատումների համար անհրաժեշտ է բնական հետազոտություններ անցկացնել տեղանքի առանձին հատվածներում, ընտրել բնորոշ հանգուցային կետեր ու տեղամասեր, որտեղից հնարավոր կլինի բացահայտել տվյալ տեղերից հստակ ու լավ երևացող բնապատկերային կարևոր տիպերը: Ստացված արդյունքի հիման վրա այնուհետև բնապատ-

կերները գնահատել նախօրոք ընտրված բալային սանդղակի կամ որևէ այլ միջոցով:

Անկասկած, գնահատման նման մոտեցումը նպատակահարմար է իրականացնել լեռնային բնատեխնածին այնպիսի համակարգերում ինչպիսին մեր հանրապետության տարածքն է: Որպես գնահատման նման եղանակի օրինակ մենք կարող ենք առաջարկել Վարդանանց լեռնանցքից դեպի Արփայի ավազան, Սևանի լեռնանցքից դեպի Աղստևի ավազան, Պուշկինի լեռնանցքից դեպի Ձորագետի և Փամբակ գետերի ավազաններ, Ռոբրտանի լեռնանցքից դեպի Ակնադաշտ և Արփայի ավազան ու նման բնույթի բազմաթիվ այլ բնապատկերներ լանդշաֆտա-գեղագիտական բնույթի արժողությունների գնահատման համար իրականացվելիք աշխատանքները:

Հիասքանչ բնապատկեր է դիտվում, օրինակ Ողջաբերդ գյուղի մոտ կառուցված «Չարենցի կամար» հուշարձանից դեպի Արարատյան դաշտ, որի հետին պլանում վեր են խոյանում Մեծ ու Փոքր Արարատները, դրանց անմիջական դիմաց տարածվող ոլորապտույտ Արաքսի արծաթափայլ հունը, իսկ դեպի աջ աստիճանաբար բարձրացող քառագագաթ Արագածը և գեղատեսիլ Արայի լեռը՝ իրենց լավ պահպանված հրաբխածին ռելիեֆի ձևերով և մարգագետնային և անտառային փաթեամբ բուսականությամբ: Անկրկնելի տեսարան է բացվում նաև Գառնիի հեթանոսական տաճարից դեպի Ազատ գետի հովտում գտնվող բնական եզակի հրաշալիքներից մեկի՝ «Քարերի Սիմֆոնիայի» բազալտի սյունաձև առանձնացումները, իսկ դրանից ձախ կողմում ընկած կառուցվածքային (հրաբխային) հետաքրքիր դարավանդը: Անկրկնելի տպավորություն է թողնում նաև Սոթքի լեռնանցքից դեպի Տրտու (Թարթառ) գեղատեսիլ հովիտը բացվող լանդշաֆտային բնապատկերը կամ Քարախաչի լեռնանցքից աջ ու ձախ կողմերում տարածվող Լոռվա և Աշոցքի դաշտերը՝ նույնպես հրաբխային ծագման ներդաշնակ ռելիեֆի յուրահատուկ ձևերով:

Անթաքույց հպարտությամբ կարելի է ներկայացնել մեր հանրապետության բնական ու մարդածին բազմաթիվ այլ բնապատկերներ, որոնք կարող են ծառայել զբոսաշրջության զարգացման համար ոչ պես արժեքավոր ու առանձնահատուկ օբյեկտներ: Ուրիշ որտեղ, օրինակ երկրաբանական նախասիրություն ունեցող զբոսաշրջիկը կարող է իր կանգնած տեղից չշարժվելով որևէ այլ տեղ, ձախ կողմում դիտել ու շոշափել մեր մոլորակի զարգացման ընթացքում ձևավորված ամենահին՝ այսինքն մինչքեմբրյան հասակ ունեցող նստվածքային և ձևափոխված ապարատեսակներ, իսկ աջ կողմում՝ ամենաերիտասարդ՝ այսինքն կայնոզոյան դարաշրջանի չորրորդականում առաջացած հրային ծագման և ժամանակակից փուխր նստվածքները, որոնք ինչպես հայտնի է տարածված են Հրազդան գետահովտի նույն վայրի ձախ լանջերին՝ Թեղուտ և Ծաղկունյաց լեռնաշղթաների տարածքում: Կամ Ռուսական հարթության հարավից՝ օրինակ, Կովկասից մինչև այդ հարթության հյուսիսային վերջավորության վրա տարածվող բնա-

կան լանդշաֆտային գոտիները մի հայացքով, կանգնած տեղից դիտել մոտ 40-45կմ հեռավորության վրա տարածվող այդ նույն լանդշաֆտային գոտիները, որոնք առկա են Արարատյան գոգավորության Արաքս գետի հունից մինչև Արագածի գագաթը ընկած տարածության վրա: Բուսաբանության կամ աշխարհագրության նկատմամբ նախասիրություն ունեցող զբոսաշրջիկին հրապուրող այս տարածքը մեր կարծիքով, ամենաարժեքավոր ռեսուրսը կարող է համարվել:

Հանրապետության մակերևույթի և կլիմայական պայմանների կտրուկ փոփոխությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում արկածային և լեռնային զբոսաշրջության զարգացման համար: Ընդամենը մոտ 30000կմ² տարածքի վրա դիտվում են ջերմաստիճանների տարեկան մոտ 80°-ի հասնող տատանումներ, որտեղ արևափայլի տևողությունը հասնում է մինչև 2700-2800 ժամի: Անշուշտ, դա ամենալավ պայման է արևային լողանքներ ընդունելու համար: Իսկ լեռնային խստաշունչ և ձյունառատ ձմեռները նպաստավոր պայմաններ են ստեղծում ձմեռային զբոսաշրջության զարգացման համար, երբ ձյան շերտի հաստությունը հաճախ հասնում է 1.5-2.0 մետրի: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն, որ մարդն իր բնագրով, առհասարակ ձգտել է լեռներ, որտեղ նա փորձում է հաստատել այնտեղ սպասվող վտանգների հաղթահարման իր կամքի արտահայտությունը, իր եսն առաջ տանելու ունակությունները:

Լեռնային դժվարամատչելի գագաթների հաղթահարելու ձգտումը ենթադրում է նաև նրա կամքի հզոր ուժի դրսևորում, ինչպես նաև վտանգին ընդառաջ գնալու նրա մղումը: Չնայած մեր բարձրաբերձ լեռնային համակարգերում **էքստրեմալ** զբոսաշրջության սիրահարները, առհասարակ ապահովագրված չեն սպասվող վտանգներից, այնուհանդերձ նրանք շարունակում են մագլցել դժվարամատչելի գագաթները և անդնդախոր կիրճերի պատերով, դրսևորել իրենց կամքի հզորությունը: Իսկ այդպիսի տեղանքնոր մեր հանրապետության լեռնային համակարգերում, ինչպես ասում են, «աստված տվել, չի խնայել»:

Բնական լեռնային միջավայրը, որը զբոսաշրջիկների վրա պատկերացվում է լանդշաֆտային բազմազանությամբ, նրանց վրա ազդում է համակարգված ձևով:

Մարդը ձգտում է օգտվել բնության բոլոր բաղադրիչներից, սակայն ոչ թե իրենց առանձին-առանձին դրսևորումներից, այլ **ավելի ընդհանրացված ու համակարգված ձևերով**: Դա առաջին հերթին կարող է ձևավորվել լանդշաֆտային հիմքի վրա, քանի որ լանդշաֆտային ասպեկտը լայն է ու խորը, որտեղ բնական միջավայրը ձևավորող բաղադրիչները հանդես են գալիս բնական զոնաների, իսկ լեռնային համակարգերում՝ նաև միասնական, փոխկապակցված ու ներդաշնակ ներկայացվող լանդշաֆտային գոտիների տեսքով: Մեզ թվում է, որ այդ ներդաշնակությունն է, որ առավել շատ է գրավում զբոսաշրջիկներին:

Այնտեղ նա ձգտում է փնտրել ու ընտրել իրեն հաճելի ու համապատասխան լանդշաֆտային բաղադրիչները:

Չխորանալով այս հիմնախնդրի մանրամասնությունների մեջ, փորձենք համառոտակի ներկայացնել մեր հանրապետության համեմատաբար փոքր տարածքի վրա ձևավորված լանդշաֆտային գոտիները, որոնք ընդգրկում են սկսած չոր մերձարևադարձայինից մինչև նիվալ գոտին: Անշուշտ, զբոսաշրջության նպատակասլաց կազմակերպման համար լուրաքանչյուր լանդշաֆտային գոտի ունի իր գրավչությունը՝ պայմանավորված անկրկնելի էսթետիկական-գեղագիտական բնապատկերներով:

Մերձարևադարձային գոտու տարբերությունները արևադարձային անապատային՝ հավերժական լռություն ունեցող գոտուց, իրենցից որոշակի հետաքրքրություն ներկայացնող տարածքներ են, որոնք գրավիչ են հատկապես այնտեղ բնակվող բնակչության կենցաղով ու անփոփոխ ապրելակերպով:

Չոր և խոնավ տափաստանային գոտին համարվում է բնակության համար ամենանպաստավորը: Մարդ-բնություն հարաբերություններում սրանք մարդուն տալիս են ավելի շատ, քան ստանում են իրենք: Սակայն տափաստանը համարվում է մարդու և բնության ներդաշնակության ամենադասական օրինակը, այլ կերպ ասած բնականի և բանականի համերաշխության կայացած ներդաշնակ վայր է: Տափաստաններում կլիման առողջարար է, ամառները երկար, աշունը ոսկեգոծ ու տաք, ձմեռները ձնառատ, իսկ դաշտերը բուրմունք տարածող: Այս տարածքներում ամենուրեք ներդաշնակ է հատկապես հանգստի, ագրոզբոսաշրջության, գյուղական տուրիզմի զարգացման անսպառ հնարավորություններով:

Լեռնաանտառային գոտին համարվում է մշտական խաղաղության ու անդորրի միջավայր: ՀՀ անտառները տարբեր են նրա հյուսիսում և հարավում: Հյուսիսային անտառները լայնատերև են, զով ու հարուստ որսակենդանիներով: Դրանք անգնահատելի են նաև օդի մաքրության, կլիմայի մեղմության առումներով:

Բոլորովին այլ է պատկերը բարձր լեռնային գոտում: Այստեղ տարածվում են վայրի գեղեցկություն ունեցող բնական օազիսներն իրենց կուսական պատկերներով: Դրանք այն տարածքներն են, որտեղ հեշտ է մեկուսանալը: Որպես կանոն լեռնային այս շրջանները հարուստ են նաև կենարար, քաղցրահամ աղբյուրներով, հանքային ջրերով, գահավիժող գետերով ու ջրվեժներով: Յուրատեսակ է նաև այստեղի բնակիչների կենցաղն ու ապրելակերպը: Նրանք մաքուր են ու անմիջական, բարի ու ստեղծագործ: Այդ ամենը մարդկային հոգուն պարզևում է անսահման հանգիստ:

Ըստ էության, դրանով է բացատրվում այն, որ մեր հանրապետությունը կարելի է համարել զբոսաշրջությանը, մարդկանց հանգստի կազմակերպման, ազատ ժամանակի նպատակասլաց տնօրինման լավագույն միջավայրերից մեկը: Միանշանակ այլ խնդիր է դրանց ռա-

ցիոնալ օգտագործման միջոցառումների տեղին և ժամանակին կիրառումը:

Գրականություն

- Աշոտ Խոեցյան, Սուսաննա Խաչատրյան** 2016. Լեռնային լանդշաֆտների պլանավորման սկզբունքները. «Աստղիկ» հրատ., Երևան, 205 էջ:
- Կարապետյան Դ.Գ.** 2016. Լանդշաֆտի ազդեցությունը մարդու կենցաղավարության վրա. ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, N1 (30), Երևան, էջ 116-121:
- Կարապետյան Դ.Գ.** 2017. ՀՀ լեռնային լանդշաֆտների գեղագիտական պայմանները որպես զբոսաշրջության առանձնահատուկ ռեսուրս, ՀՀ և մերձավոր արտասահմանյան երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, ՀՊՄՀ հրատ., Երևան, էջ 251-257:
- Ավանեսյան Ա., Մալխասյան Է., Նազարեթյան Ս.** 2000. Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները, ուղեցույց զբոսաշրջիկի համար, Երևան, էջ 159:
- Կարապետյան Գ. Ս.** 2003. ՀՀ բնատարածքի դինամիկայի աշխարհագրական հետազոտությունները և նրա շարժընթացի կանխատեսման քարտեզագրական հիմնավորումները, «Աստղիկ» հրատ., Երևան, 201 էջ:
- Հարությունյան Վ. Ա.** 2018. Լանդշաֆտային պլանավորումը որպես հասարակության տարածքային կազմակերպման արդյունավետ գործիք, Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (Միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, էջ 21-26:
- Սուվարյան Ս.Ռ.** 2018. Կայուն զբոսաշրջությունը որպես անհրաժեշտություն Հայաստանի Հանրապետությունում, Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (Միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, էջ 380-383:
- Շոխազարյան Ա.Ա., Մուրադյան Վ.Ս.** 2018. Սյունիքի մարզի լանդշաֆտների գեղագիտական հատկության օբյեկտիվ գնահատում և քարտեզագրում: Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (Միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, էջ 45-49:
- Մատիքոսյան Լ.Ս., Աբրահամյան Վ.Ս.** 2018. Շիրակի պատմամշակութային հուշարձանների զբոսաշրջային գնահատումը (Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի օրինակով) Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները (Միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, էջ 358-362:

ПРИНЦИПЫ, ЦЕЛИ И ПРИКЛАДНОЕ ЗНАЧЕНИЕ ЭСТЕТИЧЕСКОЙ ОЦЕНКИ ГОРНЫХ ПРИРОДНО- ТЕХНОГЕННЫХ ЛАНДШАФТОВ

Карапетян Г.М., Карапетян Д.Г., Барсегян Г.С.

Резюме

Несмотря на то, что в настоящее время научные исследования географических закономерностей формирования и распределения горных природно-техногенных ландшафтов осуществляются сравнительно объемно и в крупных масштабах, прагматические исследования особенностей современных проявлений развития и принципов оценки эстетической атрактивности их наиболее важных компонентов все же не достаточны. Более того, в отдельных случаях, эти исследования не достоверны и научно необоснованы.

В статье предпринята попытка дополнить эти недостатки. Это необходимо для нашей республики, т.к. в ряд наиболее ведущих направлений

экономики страны на современном этапе выдвигается процесс всестороннего развития туризма.

PRINCIPLES, GOALS AND VALUE OF AESTHETIC ESTIMATION OF MOUNTAIN NATURAL AND TECHNOGENIC LANDSCAPES

Karapetyan G. M., Karapetyan D. G., Barsegyan G. S.

Abstract

Despite the fact that currently the scientific studies of the geographical patterns of formation and distribution of mountain natural and anthropogenic landscapes are carried out relatively extensively and on a large scale, pragmatic studies of the features of modern manifestations of development and principles for evaluating the aesthetic attractiveness of their most important components are still not sufficient. Moreover, in some cases, these studies are not reliable and are scientifically groundless. The article attempts to supplement these shortcomings. This is necessary for our republic, since at the present stage, the process of comprehensive development of tourism is being advanced as one of the leading areas of the country's economy.

ՀԻՂՈԳԵՈՔԻՄԻԱ

ՀԻՂՈԳԵՈՔԻՄԻԱԿԱՆ ՄԻ ՀԱԶՎԱԴԵՂ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Շահինյան Հ.Վ., Զաքարյան Շ.Ս., Գյուլնազարյան Շ.Ա.

*ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24ա
E-mail: hrshah@sci.am
Հանձնված է խմբագրություն 21.01.2020թ.*

Քննարկվում է 2018թ. հունվարին ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում, Դեբեդի ձախ ավին ակտիվացած սողանքի հետ կապված հիդրոգեոքիմիական մի երևույթ, որի ծագումը պայմանավորված է անտրոպոգեն ազդեցությամբ: Սողանքի մարմնի վրա հորատված հորիզոնական հորատանցքերից արտահոսող ջրերը բնութագրվել են որակական այնպիսի ցուցանիշներով, որոնք կարող են համարվել արտառոց, պրակտիկայում հազվադեպ հանդիպող և պայմանավորված են մարդու գործունեությամբ: Փորձ է արվում նկարագրել այդ ջրերի յուրահատուկ կազմը ձևավորող գործոնները, որոնք, ամենայն հավանականությամբ, չօգտագործված և տարավացման ենթարկված պարարտանյութերն են:

Հանգուցային բառեր. հիդրոգեոքիմիա, սողանք, պարարտանյութեր, ջրերի քիմիական կազմ, անտրոպոգեն գործունեություն, օքսիդացում, սուլֆատ-իոն:

2018թ. հունվարին ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի տարածքում, մեծ թեքությամբ լանջի վրա տեղի ունեցավ սողանքի ակտիվացում: Համապատասխան կազմակերպություններն ու մասնագետները արագ արձագանքեցին տեղի ունեցածին: Նրանց խնդիրն էր սողանքի ապասկտիվացումը: Հորատվեցին ուղղահայաց և հորիզոնական հորատանցքեր՝ ջրի մակարդակի մոնիթորինգի և սողանքի մարմնից ստորգետնյա ջրերը հեռացնելու նպատակով, քանի որ սողանքի հետագա առաջացումը սպառնում էր երկաթուղուն, ավտոմայրուղուն և, ի վերջո, կարող էր փակել Դեբեդի հունը, ինչն առաջ կբերեր աղետալի հետևանքներ: Զուգահեռաբար իրականացվեցին երկրաֆիզիկական մանրակրկիտ հետազոտություններ սողանքի մարմնի վրա: Շնորհիվ տարված աշխատանքների, հաջողվեց սողանքն ապասկտիվացնել: Սեղմ ժամկետներում կատարվեցին համապատասխան ուսումնասիրություններ և կազմվեց ու ներկայացվեց հաշվետվություն (Բաղդասարյան և ուր., 2018), որտեղ ամփոփվեցին կատարված աշխատանքների արդյունքներն ու առաջարկվեցին հետագայում սողանքը ժամանակավորապես կայունացնելու և շարժն արգելափակող մի-

ջոցառումներ: Սակայն այս ամենի հետ մեկտեղ գրանցվեց հիդրո-գեոքիմիական մի յուրահատուկ երևույթ, որն անտրոպոգեն ինտենսիվ ազդեցություններից մեկուսացված տարածքների համար գործնականորեն կարող է համարվել բացառիկ: Սույն հրատարակումը նպատակ ունի գնահատել այդ վտանգավոր երևույթը և փորձել ներկայացնել նրա առաջացման առավել հնարավոր պատճառները:

Կատարվող աշխատանքներին զուգահեռ նմուշարկվեցին նաև տարածքում գործող հորատանցքերի և սողանքի ակտիվանալուց հետո ի հայտ եկած աղբյուրների ջրերը՝ նրանց որակական բնութագրերը տալու և ջրերի ծագումնաբանական նույնականացման խնդիրը լուծելու համար: Առաջին իսկ օրերին հիդրոքիմիական հետազոտություններ իրականացվեցին ՀՀ ԱԲՆ կողմից և ստացված արդյունքները թվացին զարմանալիորեն արտասովոր: 2018թ. փետրվարին կատարվեցին ջրերի նոր նմուշարկումներ և կազմերի լրացուցիչ հետազոտություններ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հիդրոգեոքիմիական լաբորատորիայում: Ստացված արդյունքները շատ մոտ էին ԱԲՆ լաբորատորիայի ստացած արդյունքներին (աղ.1, 2): Դրանք մեզ բերեցին այն համոզման, որ աղբյուրների և BH-2H հորիզոնական հորատանցքի ջրերի արտառոց կազմերը կարող են պայմանավորված լինել երկու գործոններով՝ անտրոպոգեն գործոնետյամբ և տեղանքի երկրաբանական-երկրաքիմիական առանձնահատկություններով: Ընդ որում, չի բացառվում այս գործոնների միաժամանակյա հանդես գալը: Դրանցից հիմնականի առանձնացման համար անհրաժեշտ էին տվյալներ սողանքի տեղամասում գյուղատնտեսական գործունեության, թափոնների մեկուսացման տեղի և պայմանների վերաբերյալ: Տեղանքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները բերված են ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի ներկայացրած հաշվետվությունում (Բաղդասարյան և ուր., 2018):

Ուսումնասիրությունների տվյալ փուլում ենթադրվեց, որ գրունտային խորը հորիզոններ ներթափանցած ջրերը, անցնելով որոշակի տարածություն երկրաքիմիական տեսակետից անոմալ միջավայրով, ենթարկվել են կազմի կտրուկ փոփոխությունների: Հետագայում, տեղաբնակների հետ հանդիպումների ընթացքում արված հարցումների արդյունքում պարզվեց, որ հողային տարածքներից մեկում, սողանքից հարավ-արևմուտք, նրանից ուղիղ գծով մոտ 5-6կմ հեռավորության վրա, գտնվում է մի շինություն, որը նախկինում ծառայել է որպես պարտանյութերի պահեստ: Այժմ մնացել են շինության միայն ավերակները: Ներսում գտնվող տարբեր տիպի պարարտանյութերը, շինության քանդվելուց հետո, մնացել են բաց երկնքի տակ և առնվազն 35-40 տարի ենթարկվել «հողմնահարման»: Անձրևաջրերն ու ձնհալի ջրերն ինտենսիվորեն քայքայել են նյութը և նրա օքսիդացման արդյունքները, ջրերի հետ միասին ներծծվելով հողի մեջ, ստորգետնյա ռելիեֆի ուղղությամբ շարժվել են դեպի ավելի ցածրադիր տեղամասեր: Նման տեղամաս է հանդիսացել ակտիվացած սողանքի տարածքը: Հետաքրքիր

է, որ ջուրը դուրս չի եկել երկրի մակերես, այլ կուտակվել է ստորգետնյա «ռեզերվուարում»: Դրա մասին խոսում են այս տեղամասում մեր կողմից նախկինում կատարված աշխատանքների արդյունքները, երբ չի գրանցվել ջրերի որևէ նման անոմալ կազմ: Ամենայն հավանականությամբ այդ «ռեզերվուարը» կամ ամբողջությամբ, կամ էլ իր ծավալի մի զգալի մասով տեղադրված է սողանքի մարմնի տարածքում, որի սահմաններում մակերևութի վրա նրա շարունակական և աստիճանաբար ավելացող ազդեցությունն էլ, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է սողանքի ակտիվացման հիմնական պատճառներից մեկը: Հորիզոնական հորատանցքերը նպաստել են այդ ջրերի հեռացմանը և դիտվել է սողանքի ապաստիվացում: Հետագայում, մի քանի անգամ դիտարկումների ժամանակ, հորատանցքերի հորաբերանները և աղբյուրների ելքերը եղել են ցամաք, ինչը վկայում է, որ ընթանում է ջրերի կուտակում:

Քանի որ այժմ արդեն պրակտիկորեն անհնար է ճշտել քայքայված ու տարավացման ենթարկված պարարտանյութերի տեսակն ու քանակը, փորձենք գոնե մոտավոր վերականգնել նրանցում պարունակվող մեզ հետաքրքրող տարրերի՝ ջրի մեջ անցման գործընթացին նպաստող երևույթներն ու ջրերի այդպիսի անոմալ կազմերի ձևավորման հնարավոր սկզբնաղբյուրներն ու պատճառները: Քանի որ դիտարկվող ջրերում կազմերի անոմալիաները արտահայտվում են հատկապես Na^+ , SO_4^{2-} , NO_3^- իոնների պարունակությունների և ընդհանուր կոշտության (Ca^{2+} , Mg^{2+}) արժեքներով, որպես օրինակ դիտարկենք մի քանի պարարտանյութեր, որոնք կարող են հանդիսանալ ջրերում այդ տարրերի կուտակման առավել հնարավոր աղբյուր: Այս դիտարկումը կարող է նպաստել ընթացող պրոցեսների մասին սխեմատիկ պատկերացում կազմելուն:

Պարարտանյութերը բազմաթիվ են, ունեն կիրառման տարբեր նշանակություններ, գյուղատնտեսության մեջ օգտագործվում են շատ մեծ քանակներով և դասակարգվում են ըստ բազմաթիվ հայտանիշների: Ըստ ծագման լինում են օրգանական և հանքային (ոչ օրգանական): Առաջինները հիմնականում պարունակում են ազոտ, կալցիում, մագնեզիում, ֆոսֆոր, ծծումբ և այլն ու յուրացվում են բուսականության կողմից մեծ քանակներով: Երկրորդ խմբի պարարտանյութերում հիմնական բաղադրիչներից են բորը, մանգանը, կոբալտը, յոդը և այլն: Օրգանական պարարտանյութերը ստացվում են կենդանիների կենսագործունեության, գյուղատնտեսական թափոնների արդյունքում:

Հանքային պարարտանյութերի աղբյուրը օգտակար հանածոներն են (օրինակ՝ ֆոսֆոր), մթնոլորտային բաղադրիչները (ազոտ) կամ արդյունաբերական արտադրանքի ուղեկցող արգասիքները: Ընդհանուր առմամբ, սրանք կարող են լինել ազոտական, ֆոսֆորական, կալիումական, մագնեզիումական, ծծմբական և ուր:

Բերենք պարարտանյութերից որոշների հակիրճ նկարագրություն-

նը, որոնց դերը ուսումնասիրված ջրերի կազմի ձևավորման գործում, մեր կարծիքով, եղել է վճռորոշ:


Ծծումբը բնության մեջ լայն տարածում ունեցող տարր է և ունի մեծ նշանակություն բույսերի ու կենդանիների կենսագործունեություն համար: Այն կուտակվում է ակտիվ հրաբխային մարզերում: Այժմ արդեն էլեմենտար ծծումբը ստացվում է նավթի և գազի վերամշակման և մաքրման արդյունքում (Миккелсен и др., 2014): Ըստ նույն հեղինակի, ծծմբի կորուստը հողից հիմնականում ընթանում է արմատների տարածման գոնայից սուլֆատ-իոնի տարալվացման հետևանքով, երբ առկա են մեծ քանակի տեղումներ, կամ հողերը ինտենսիվ ոռոգվում են: Նկատենք, որ սուլֆատ-իոնի պարունակությունը ջրերում սովորաբար չի սահմանափակվում, սակայն, օրինակ, ԱՄՆ Շրջակա միջավայրի պահպանման գործակալությունը համարում է, որ երբ այդ արժեքը գերակշռում է 250մգ/լ, վատանում է խմելու ջրի համը և հոտը: Մեր հետազոտություններում այդ արժեքը մի քանի նմուշներում հասնում է 4000-5000 մգ/լ և ավելի:

Սուլֆատ-իոնի հնարավոր մատակարար հանդիսացող պարարտանյութերից, որպես օրինակ, դիտարկենք մի քանիսը: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող ծծումբ պարունակող պարարտանյութերը շատ կայուն են և կարող են պահպանվել շատ երկար ժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ նրանք հիմնականում սուլֆատի աղեր են, որտեղ ծծումբն ունի օքսիդացման բարձրագույն աստիճան և քիմիապես կայուն է: Այս աղերը նաև, որպես կանոն, լավ լուծելի են և հեշտությամբ տարալվացվում են տեղումներով ու անցնում ջրերի մեջ սովորական լուծմամբ, դիսոցվելով իոնների, ինչի արդյունքում լուծույթում ընթանում է աղերի դիֆուզիոն տեղաշարժ: Օրինակ, $\text{Na}_2\text{SO}_4 \rightarrow 2\text{Na}^+ + \text{SO}_4^{2-}$:

Կալցիումի սուլֆատը ($\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$) ջրում թույլ լուծելի է: Դանդաղ լուծվելու հետևանքով սուլֆատ-իոնն անցնում է հողային լուծույթի մեջ և հետագայում կլանվում բույսերի կողմից. $\text{CaSO}_4 \rightarrow \text{Ca}^{2+} + \text{SO}_4^{2-}$:


Կալիումի սուլֆատը (17-18% S) (K_2SO_4) նույնպես հաճախակի օգտագործվող պարարտանյութ է, ջրում լավ լուծվող և բույսերի համար սուլֆատային ծծմբի լավ աղբյուր է. $\text{K}_2\text{SO}_4 \rightarrow 2\text{K}^+ + \text{SO}_4^{2-}$:

Թիոսուլֆատները (10-26% S) հեղուկային են և պարունակում են ծծումբ $\text{S}_2\text{O}_3^{2-}$ տեսքով: Բավականաչափ տաքացած հողում թիոսուլֆատ-իոնը մեկ-երկու շաբաթում անցնում է սուլֆատ-իոնի: Թթու միջավայրում տրոհվում են, առաջացնելով ծծումբ ու ծծմբային անհիդրիդ.



Թիոսուլֆատները նաև հեշտությամբ ռեակցիայի մեջ են մտնում տարբեր քիմիական միացությունների հետ, հանդես գալով որպես վերականգնիչներ և իրենք օքսիդանում են: Օրինակ, ուժեղ օքսիդիչների հետ, ազատ քլորով օքսիդանում են մինչև սուլֆատներ և ծծմբական թթու: Իսկ էլեմենտար ծծումբը, ընկնելով հողի մեջ, օքսիդանում է

